

րուն հար և մայր կաղապարները՝ որոնց համախումբ օրինակը կը գեանդենք աստանօր, և որոնք սեպհականութիւնն են հիմայ իր աղջկանց, բուրբերէնի կաղապարներուն հետ :

* * Գիտութեան և ձեռարուեստի համար կարծես ստեղծուած տղայ, 16 տարեկանին «խանարիայի սնտուկ» կոչուած փոքրիկ նուագարան մը ձեռք կը ձգէ և անոր ուղորմուկ գլանին վրայ երկարէ փուշեր գամելով՝ քանի մը փորձերէ վերջ կ'աջողի «Առաւօտ լուսոյ», «Տեր ողորմեա» են. ձայնաղորշմկ ու նուագել, ծնողացը նիացումին մեծ առարկայ դառնալով : — «Առաւօտ լուսոյ» են մինչեւ «տեւեանտ» կամ «նօքրիւն»՝ ճամբան հետու եր, իրաւ, բայց ուսում մը բաւ էր՝ դեպ ի երոզական երաժշտութիւն խիզախելու համար . ու կ'սկսի նետելի կանոնաւոր դարերացքի մը, ձուգերքօ Եանովիճ անուն դաշնակահար մը իրեն ուսուցիչ ու ունենալով : Միւնենտիսեան բաւական յառաջդիմած է դաշնակ ածելու մէջ, այնպիսի ատեն մը՝ երբ բովանդակ մայրաքաղաքիս մէջ հայագրի դաշնակահարներ մասի վրայ կը համրուէին :

* * Քաղկին դպրոցէն 15 տարեկանին ուսումնաւարտ ելելով կը նետել ոսկերչութեան և քիչ ատենէն այդ արհեստին կ'ընտելանայ՝ իր վարպետը գերագանցելու աստիճան, մինչեւ որ այս վերջինը կը հարկադրուի շահրնկեր ընել գինք : — 1831 ին հայրը կորսնցունելուն իր վրայ կը ծանրանայ բազմանդամ ընտանիքին հոգը : Պահ մը փողերանոց պաշտօնի կը կոչուի, բայց բոշակէն դժգոհ՝ կը մտադրէ ինքնագլուխ գործել Չովխանի խանի մէջ, ու շատ չանցած՝ ոսկերչագիտ կ'անուանուի այն ատենի ամիրայական գերդաստաններուն և ջոջ ազգայիններուն, շնորհի իր ձեռակերտներուն անմըցելի նրբութեան :

* * 1839 բուականէն է որ կ'սկսի Միւնենտիսեանի տպարանական գործունէութիւնը : — Օր մը Խ. Միսաքեան բարեկամը բնազիր կ'ըլլայ իրեն՝ ոսկերչութենէ նրաժարելով տպարան մը բանալու : Գծուարին հարց և խորհուրդ խորին՝ արհեստէն շեղողի մը համար անշուշտ : Անա քէ ինչ գրած է ինք այս մասին . — «Տպագրութիւնն ինչպէս կ'ըլլայ, **Հայ գիր, մայր գիր** ինչ բնակ են, ատոնց մասին բնաւ գաղափար չունենալով, միայն իր գիտցածին չափ «Միսաքեանի» վեր ի վերոյ տուած տեղեկութիւններէն քաջապետուած և այս գերագանց գիտին վրայ յանձնուս սքանչացած՝ իղձ մը ունեցայ պարապ ատեններուս պողպատեայ գիրեր շինելով գրողելու» : — Երբեւ նախախաչիք՝ պողպատի վրայ կը փորագրէ — յատկապէս իր տպելիք օրացոյցներուն համար պատրաստուած — 8 բուրբօ հայկական մանր տատեր՝ աշնքան վայելուչ և անբերի որ, Խաչատուր Պատուելի գմայելով ի տես այդ ձեռակերտին՝ շուներ շիտակ կ'առնէ արքունի ճարտարապետ Արվիբեան Յովհաննէսի վրայ, որուն ջանքով դեռ նոր կառուցուած ու բացուած էր գիշերօթիկ ձեմարանը : Այդ դպրոցը տպարանով մը կ'ուզէին օժտել արդէն . արդ ո՞վ կարող էր տպարանապետ կարգուիլ նոն **Իէգարիճէն** Միւնենտիսեանէ գատ : Զմուռանք դիտել սայ ընթերցողին, քէ մետաղի վրայ փորագրութիւն ընելու, տատեր յօրինելու և ձուլելու իր ճարտարութիւնը մեծ աղերս ունի անտարակոյս ոսկերչութեան մէջ իր ունեցած խոր նմուտեան հետ . ո՞չ ապաքէն քաջաձարձ **սասէ՛քեար** մըն էր Միւնենտիսեան : — Ու կ'սկսի գիրերուն ամբողջական պատրաստութեանը : ձեմարանի լուսցարանը կը շատկացուի իրեն՝ իբր տպարան, ուր, մեկ երկու օգնական գործատրներով քանի մը ամիս գիշերը ցորեկին խառնած՝ տքնելէ լետոյ, գործը գլուխ կը հանէ և 1839 նոյեմբերի վերջ կ'աւարտէ 1840 բուականի Օրացոյցին տպագրութիւնը՝ հարիւր հազար օրինակ, մինչ սովորաբար օրացոյցի մը տպարանն թիւր տասը հազարի մէջ կը խաղար : Այդ օրացոյցը որ «չԽաչիտար, ի ձեմարանի Ս. Երուսաղէմի» տիտղոսը կը կրէ և որ մաքուր ու վայելուչ տպագրութեանը կրնայ դասուիլ գուգակչիւ . Վենետիկեաններուն՝ 3 տարուս և կեսը ունեցած է լոկ, վարձարանին փակման նետեանօք : — Իր ունեցած գործիքը նախապէս փայտէ հասարակ մամուլ մըն էր՝ զոր ձեռք անցուցած էր Քաղեոս Տիվիթեանի տպարանէն : — Նոյն տարիները Տաճկաստանի մէջ հայերէն տպարանի արտօնութիւն Արապեաններն ունէին . ո՞չ որ կը համարձակէր նոր տպարան բանալու : Միւնենտիսեան իր տպարանը կը պարտի հօգը աջակցութեանը Արվիբեանի որ՝ Գիւրքճի խանի մէջ հաստատուած տպագրիչ Արապեան Գալուստը համոզած էր նախօրօք, քէ ազգային հանգամանք ունեցող օրացոյցներ ու դասագիրքեր միայն պիտի տպագրուէին ձեմարանի նոր տպարանին մէջ : — Հակառակ դպրոցին զոյուելուն, Յովհաննէս կը շարունակէ նոն իր տպագրիչի արհեստը, մինչեւ որ 1843 ին Կայս. Տպարանի (Քաղվմխանի Ամիրէ) վերատեսչութենէն կը նրախրուի՝ բուրբերէն **բա՛լից** կոչուած գիրը ձեռակերպելու և ձուլելու համար : Իր տպարանական կանկարասին կը փոխադրէ Պօլիս, Չուգուր Զէյնի